№ 147 Օգոստոսի 11 (23) 1881 Օգոստոսի 11 (23) № 147

ՏԱՄՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Տարաբաշխութեան գինում են տղդակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն ինչում։

Յայտարարութիւնների համար վճարում են
հրատարակիչը բառին 2 կոպէկ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ռուս ազգաբնակութիւնը կովկասում.—ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նամակ Ս. Պետերբուրգից, Նամակ խմբագրին, Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Հայոց խնդիրը Բուքինիա, Նամակ Ֆրանսիայից, Նամակ Թիւրքիայից, — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ, — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ, — ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ, —ՅԱՅՏԱՐԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ,

## ՌՈՒՍ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

—

„Порядокъ“ լրագրի № 210 մէջ տպված է մի թղթակցութիւն Թիֆլիսից, որի մէջ թղթակիցը ծանօթացնում է մեզ կովկասեան փոխարքայի Գլխաւոր վարչութեան կառավարիչ գեներալ Ստարօսէլսկու զեկուցումների հետ, որ նա ներկայացրել է Զէյնօմօրեան վիճակի ռուս ազգաբնակութեան դրութեան մասին։ Ռուս գաղթականների մասին Զէյնօմօրեան վիճակում զեկուցումների հեղինակը ասում է որ ռուս գիւղացիները սովոր լինելով դաշտային երկրին, մինչև այժմ չեն կարող ընտելանալ լեռնային երկրին և դեռ երազում են այն բանի վրա, որ կարողանան թողնել սարօտ երկիրները, որոնք անհամապատասխան են նրանց սովորութիւններին և կեանքի առաջվայ պայմաններին և կրկին վերադառնան իրանց հայրենիքը։ Այդտեղի ռուս ազգաբնակութեան մեծ մասը անկարող է պարապել որ և է երկրագործութեամբ և պարապում է միմիայն մրգերի ծախելով, այն էլ չերկէզներից թողված այգիներից։ Չէրնօմօրեան նահանգը, գրեթէ կատարելապէս գատարկված լինելուց յետոյ բնիկ չերկէզ ազգաբնակութենից, բնակեցրած է այժմ գլխաւորապէս ռուս երկրագործներով, բայց կան այդ երկրի մէջ, թէև սակաւաթիւ, գերմանացիներ, չէխեր, մոլդաւացիներ, յոյներ, հայեր և չերկէզներ։ Վիճակի 46 գիւղերից 19 գիւղ բուն ռուս գիւղերն են։

Բայց ռուս ազգաբնակութիւնը, ասում է նորին գերազանցութիւնը իր զեկուցման մէջ, ինչքան էլ ցանկալի է որ կատարելապէս հաստատվի այդ երկրի մէջ, իսկ այն պատճառով որ նա ռուս է և նրա միջնորդութեամբ ճնացած ազգութիւնները աւելի շուտ կը միանան իրանց ընդհանուր հայրենիքի հետ, նոյնպէս և այն պատճառով որ ռուս տարրը աւելի իրաւունք ունի տիրել այդ ամայի երկրի և նրա հարստութիւնների վրա, որովհետև իր արիւնով նուաճել է այդ երկիրը,—այնու ամենայնիւ, աւելացնում է գեներալ Ստարօսէլսկի, ցաւելով պէտք է խոստովանվել որ ռուս ազգաբնակութիւնը երկրի կոլօնիզացիայի մէջ յայտնվեցաւ առ այժմ ամենաանբնդունակ։ Ռուս գաղթականներին չէ աջողվել փոքր ի շատէ բաւականացուցիչ կերպով կազմակերպել այդ երկրում իրանց տնտեսութիւնը և ընտանեկան կեանքը։ Նրանք չեն դիմանում երկրի կլիմային, չեն կարող ընտելանալ երկրի լեռնային դիրքերին, չեն կարող պատերազմել լեռնային բնութեան և նրա բուսականութեան դէմ։ Չը նայելով որ ռուս երկրագործը 15 տարի է անցկացրել արդէն Չէրնօմօրեան երկրում, աւելացնում է յարգելի զեկուցանողը, նա մինչև այժմ չը կարողացաւ իրացնել երկրին յարմար և համապատասխան տնտեսական ձևերն ու միջոցները և շարունակում է ձգտել վերադառնալ Ռուսաստանի ներքին նահանգների դաշտային երկիրները, որտեղ առաջ ապրում էր։

Իր զեկուցման վերջը նորին գերազանցութիւնը առաջարկում է կառավարութեանը բնակեցնել կովկասեան լեռնային երկիրներում չերկէզներին, յոյներին և հայերին, որոնք աւելի լաւ են գործածում լեռնային ձեռքի արօրը։

Գեներալ Ստարօսէլսկու այդ արդար, խելացի և անկեղծ զեկուցմանը շատ քիչ կարելի է աւելացնել։ Նրա ամեն մի խօսքը ընչում է մի և նոյն ժամանակ և բուն ռուս ազգասիրութեամբ և ուրիշ կողմից անկողմնապահ զգացմունքով ու անկեղծ ցանկութեամբ ճշմարիտ օգտաւէտ ծառայութիւն անել թէ ռուս ազգաբնակութեանը, ազատելով նրան իր համար սպանիչ լեռնային կլիմայից, թէ երկրի առաջադիմութեանը, առաջարկելով բնակեցնել այդ երկրի մէջ սարօտ երկիրներին սովոր տարրերը։

Բայց որ գլխաւորն է զեկուցման մէջ, այդ յարգելի զեկուցանողի անկեղծ ցանկութիւնն է կատարել ճշմարտութիւնն ասել կառավարութեանը, առանց ցանկանալու մոլորեցնել նրան, ինչպէս անում էին մի քանի այլ զեկուցանողներ՝ իրանց ազգասէր ցոյց տալով, զոհում էին բուն ռուս երկրագործների թանգագին շահերը, հաւատացնելով որ նրանք կարող են դիմանալ կովկասեան սարօտ երկիրներին։ Նրանց ինչ փոյթ, որ ռուս երկրագործը կը կորչի, կանհետանայ Չէրնօմօրեան երկրում կամ Ղարսի նահանգում,—նրանց նպատակն է միայն մոլորեցնելով կառավարութիւնը, հաւատացնել նրան որ ռուս տարրը շատ լաւ կաջողվի այդ տեսակ երկիրներում և իրանց ազգասէր ցոյց տալով, ստանալ չնորհակալութիւններ և պատուհասներ կառավարութենից։

Ընդհակառակն, գեներալ Ստարօսէլսկու զեկուցումը ապացոյց է նրա ճշմարիտ և բուն ռուս ազգասիրութեան, որովհետև նա հոգում է ռուս տարրի վրա և զգուշացնում է կառավարութիւնը որ դաշտերի երկրագործը չէ դիմանում և կորչում, անհետանում է, կատարելապէս սպառում է իր ոյժերը՝ բնակեցրած լինելով մի երկրի մէջ, որ նրա բնաւորութեանը անհամապատասխան է։

Եթէ մենք գեներալ Ստարօսէլսկու պէս ճշմարիտ, անկեղծ ռուս ազգասէր կառավարիչներ աւելի մեծ թւով ունենայինք, մենք չէինք ընկնի անդադար անուղղելի սխալների մէջ, կազատվէինք այլ և այլ տարակուսանքներից, ի զուր չէինք մոլորեցնի կենտրօնական կառավարութիւնը, չէինք զոհի ռուս տարրը հաստատ կօրստեան, բնակեցնելով նրան իրան անյարմար լեռնային երկիրներում և ուրիշ կողմից ահագին օգուտ կը բերէինք պետութեանը ծաղկեցնելով մեր կովկասեան լեռնային երկիրները, բնակեցնելով նրանց մէջ ռազմական ընդունակ և երկրին սովոր տարրերը։

Թող միւս մեր պաշտօնեաները օրինակ առնեն յարգելի զեկուցանողից և հասկանան որ ժամանակը հասել է, երբ պէտք է անկեղծ կերպով մտածել պետութեան ընդհանուր շահերի վրա, անկեղծ կերպով ներքան ծառայել և ոչ թէ ցոյց տալով կեղծ ազգասիրութիւն, գիտակցական կերպով մոլորեցնել կառավարութիւնը զոհելով ռուս երկրագործ տարրը միմիայն իր անձնական շահի և փառքի համար։ Թող մեր բիւրօկրատիան հետևի գեներալ Ստարօսէլսկու օրինակին։

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Յուլիսի 29-ին

Ձեր պատուական «Մշակի» № 135-դ տպած պ. Գր. Խալաթեանցի երկտող նամակը մի իրաւացի բողոք է մի քանի հետաքրքիր պարոնների փոքրոգութեան դէմ. բայց ի զուր այդ երիտասարդը ուշադրութիւն է դարձնում անհիմն զրպարտութիւնների վրա, քանի որ վերջիններս լոկ բերանացի կերպով են արտայայտվում և ոչ մամուլի միջնորդութեամբ. վատաբանութիւնը և զրպարտութիւնից փրիստօն էլ ազատ չէը, և ուր մնաց հասարակ մահկանացուն։

Վերոյիշեալ փոքրոգի պարոնները յամառութեամբ փնտռելով «Մշակի» № 72-րդ գրած յօդուածի հեղինակին ինքները իրանց դիմակաթափ են անում և մեզ աւելի են տալիս կարծելու թէ кошка знаетъ чье мясо съѣла. և ուրեմն, Լ. ճեմարանին նուիրած մի քանի խորհրդածութիւնները ունեցել են ազդեցութիւն ում վրա որ հարկաւոր է. այս ենթադրութիւնը դժուար չէ գուշակել մի «ազնիւ պարոնի» խոստովանութիւնից, այն մեծահանճար պարոնի, որ «երբեմն աշակերտ Լ. ճեմարանի» առորագրութեամբ անվներ հանդէս գալու «Մշակի» № 103-րդ պաշտպանելու իբր թէ Լ. ճեմարանի «զգեստի հարեալ» պատիւը։ Ցաւում եմ, որ ընդհարար պատասխանների հետաքրքրութեամբ և պապական անսխալականութեամբ վարակված պարոնները, փոխանակ Լ. ճեմարանի մէջ տեղի ունեցող զեղծումները մտրակելու, օրինակ են առնում «երբեմն Լ. ճեմարանի աշակերտից», որ միայն արևելեան կեղծաւորութեամբ չոգոքրտում է և արժի ծառայութիւն մատուցանում այն իսկ ճեմարանին, որին սիրելու արատնութիւնը իրան է լոկ անպատկանում։ Մի ազգի կամ հասարակական հիմնարկութեան պակասութիւնները մամուլի միջնորդութեամբ նկատելն, չէ նշանակում վնասել նրանց, այլ ընդհակառակն, նպաստաւոր վնել նրանց գոյութեան, անուան և փառքին։ Միթէ մեր «Մեղու» և «Մշակ» լրագիրները յանդիմանելով իրանց էջերում, քաղաքային վարչութենից, վաճառական դասի, հոգևորականների և դպրոցական հոգաբարձունների վարմունքը և պարտազանցութիւնը դիտաւորութիւն ունեն միայն գայթակղութիւն սերմանել ազգի մէջ։ Այսպէս մտածել կարող է ճըշմարտութեան մոլեռանդ ու անկիրթ հալածողը և ոչ թէ ջատագովը։ Հետաքրքիր անձանց մենք խորհուրդ կը տայինք զսպել իրանց հետաքրքրութեանը և յիշել ինչ եղանակով կատարվեցաւ այս տարվայ մայիս ամսին հայոց լեզուի հարցաքննութիւնը Լ. ճեմարանում, չէ որ յարդելի ուսուցիչներից մինը, «Մշակի» 72-րդ չարաբաստիկ յօդուածի ազդեցութեան ներքոյ զայրացած կամեցաւ կարել ամբողջ դասատան աշակերտներ և հարկադրել սրանց կրկնաքննութեան ամբարիշտ արձակուրդից յետոյ։ Դա խոհեմութիւն չէ, այլ ծայրայեղութիւն է. մի ամսվայ ընթացքում Լ. ճ. աշակերտներից հնչտ չէ ստեղծել մի մի Ալիշան կամ Գաբ. Այվազեան։

Մի քանի խօսք էլ «Մշակի» № 103-րդ տպած «երբեմն Լ. ճեմարանի աշակերտին». այս ազնիւ պարոնը ասում է թէպէտ և հայոց աշխարհագրութիւնը, պատմութիւնը և հայ դպրութեան պատմութիւնը օգտաւէտ են աշակերտների համար, սակայն վերջինները չափազանց իբր թէ ծանրաբեռնված են բազմաթիւ ուրիշ դասերով։ Այս ինչ խորհրդաւոր խօսքեր են, ազնիւ պարոն, դուք հասկանում էք արդեօք թէ ոչպիսի թեթևամտութեամբ դատապարտում էք Լ. ճեմարանը ազգի առաջ. ձեզ համար հասարակաց կարծիքը գոյութիւն չունի ուրեմն. հայ հասարակութիւնը ոչինչ ակնկալութիւն չը պիտի սպասէ այսուհետև գերազանցակ Լազարեանց ճեմարանից. էլ ընծայելու չէ նա իր երախտապարտ ազգին հայ ոգով ոգված ու կրթված, հայ պատմութեան և գրականութեան հմուտ երիտասարդներ։ Չեմ կարծում, որ Լ. ճեմարանի լուսաւորեալ գլխավորները համաձայն են յօդուածագրի անհեթեթ կարծեաց հետ. ոչ, դա անկարելի է։

Եթէ արդարև աշակերտները այնքան ծանրաբեռնված են լատին և յոյն լեզուների դասերով, ով է արգելում ճեմարանի կառավարութեան գէթ ամարային արձակուրդին աշակերտներին դասեր բաժանել հայոց պատմութիւնից և գրպրութեան պատմութիւնից և բացի դրանից պատանիների ընթերցանութեան համար բերել տալ Թիֆլիզից հայ պարբերական հրատարակութիւններ։

Չը կամենալով այլ ևս ձանձրացնել «Մշակի» ընթերցողների ուշադրութիւնը, մենք աւելորդ ենք համարում մանրամասնաբար պատասխանել «երբեմն Լ. ճեմարանի աշակերտի» հնչին յօդուածին, քանի որ դա կրիտիկայից ստոր է, իսկ на всякое чиханье не наздравствуешься ասում է ռուսաց առածը։

Լ.

### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Փօթի օգոստոսի 4

Փօթիի ժողովուրդն արգէն ձեզ յայտնի է իր առատաձեռնութեամբ, որին ապացոյցը ցոյց տուեց անցեալ սովի ժամանակ։

Այժմ ևս հարկաւորեցաւ տեղւոյս լուսաւորչականաց եկեղեցին վերանորոգել, որին համար թէ հայերը և թէ ուրիշ ազգերը բոլորն էլ իրենց լման նուիրեցին բացի երեք անձինքներէ. որոնք կրօնքով լուսաւորչական են, և իրենք հանգանակութեան չը մասնակցելէն զինքն այլոց էլ պատճառ կը լինեն չը տալու. սրանց չեմ ուզեր անուանէ յիշել։

Պ. կարապետ Պապօվի անունն արդէն քանիցս կարդացած եմք ձեր լրագրի էջերում, որն որ թէ սովելոց և թէ Միացեալ ընկերութեանց վճարած է 3000 րուբլի։ Ասկէ 15 օր առաջ ևս յատուկ նամակաւ մը 500 րուբլ խրկեց Կ. Պօլիս Ներսէս պատրիարքին, իր ամենակարեւոր պէտքերն հոգալու համար. թող օրինակ առնեն մեր հարուստ ազգայիններն։

Միայն եկեղեցւոյ վերանորոգութեան համար դեռ ոչինչ չէ վճարած, այսու ամենայնիւ փօթիի ժողովուրդն յոյս մեծ ունի նրանից, որ իր բարերարութիւնն այստեղ էլ կը հաստատէ։

Տեղիս հայ-լուսաւորչական և հայ-պապականաց մէջ խիստ համերաշխութիւն կը տիրէ, ամենեին խորութիւն չունին. արդէն պապականաց եկեղեցի չը կայ այստեղ և նրանք կը յաճախեն լուսաւորչականաց եկեղեցին։

Անձրևներն խիստ սաստիկ էին մեզ մօտ. այժմ օդը լաւ է և եթէ այսպէս շարունակէ, յոյս ունիմք առատ բերք ունենալ։

* * *